ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1961 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

# Վ. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎԱԾ ՊԱՅՔԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1917—1920 ԹԹ.)

Հայպետհրատ, 1960

*Նախասովետական Հայաստանի պատմության ամենահետաքրքրական ու նշանակալից շրջաններից մեկը 1917—1920 թվականներն են, այն տարիները, որոնք ինչպես դրամատիկական ու ողբերգական էին՝ ժողովրդին հասած աղետների, նրա գլխին պայթած անթիվ արհավիրքների առումով, նույնպես էլ հերոսական ու անմոռանալի՝ ռևոլյուցիոն պայքարի գեղեցիկ օրինակներով, ազատության, լուսավոր ապագայի համար թափված սրբազան արյունով:*

*1917—1920 թվականների Հայաստանի պատմությունը մեր գիտնականների համար չի եղել «անտեսված անկյուն»: Պատմաբանները, տնտեսագետները, գրականագետները քիչ գործեր չեն ստեղծել՝ նվիրված Հայաստանի այդ շրջանի այլևայլ հարցերի լուսաբանությանը, գրվել են առանձին գրքեր, ուսումնասիրություններ ու հոդվածներ, պաշտպանվել են թեկնածուական ու դոկտորական դիսերտացիաներ... Բայց ամեն ինչ չէ, որ արված է կատարյալ ու անթերի, ամեն հարց չէ, որ դարձել է առանձին և ամբողջական ուսումնասիրության նյութ՝ ստանալով իր հատուկ և բազմակողմանի քննարկումը: Այս առումով էլ, ահա, ուշագրություն է գրավում անցյալ տարվա վերջերին Հայպետհրատի հրատարակությամբ լույս տեսած Վ. Ա. Միքայելյանի «Հայաստանի գյուղացիությունը Սովետական իշխանության համար մղված պայքարի ժամանակաշրջանում (1917—1920 թթ.)» խորագրով ուսումնասիրությունը: Այն մեր պատմագրության մեջ առաջին փորձն է՝ տալու նշված ժամանակաշրջանի Հայաստանի գյուղացիության ամբողջական և ամփոփ պատմությունը: Մեզ թող սխալ չհասկանան. այդ պատմության մի շարք էջեր լուսաբանվել են մեր պատմական գրականության մեջ, բայց դա կատարվել է առանձին, այս կամ այն հիմնական խնդրի առնչությամբ, մի հանգամանք, որը, ինչպես, որոշ առումով հեշտացրել է քննարկվող գրքի հեղինակի գործը: Ընդգծում ենք «հեշտացրել է», բայց երբեք չի նսեմացրել նրա կատարածը: Վ. Միքայելյանը ստեղծել է 1917—1920 թվականների Հայաստանի աշխատավոր գյուղացիության ամբողջական պատմությունը:*

*Աշխատությունը բաղկացած է փոքրիկ նախաբանից, երեք ընդարձակ գլուխներից և համառոտ եզրափակումից: «Երկու խոսք» նախաբանում հեղինակը հիմնավորում է քննարկվող հարցի կարևորությունն ու հրատապությունը: Այստեղ հեղինակն ընդգծում է իր ուսումնասիրության բուն նպատակը, այն է՝ Հայաստանի օրինակով ապացուցել լենինյան այն թեզի ճշմարտությունը, թե «Սովետական իշխանության գաղափարներն ու սկզբունքները մատչելի և անմիջական իրագործելի են ոչ միայն այն երկրներում, որոնք արդյունաբերական տեսակետից զարգացած են, ոչ միայն սոցիալական այնպիսի հենարան ունեցող երկրներում, ինչպիսին պրոլետարիատն է, այլև այնպիսի հիմք ունեցող երկրներում, ինչպիսին գյուղացիությունն է»: Դրանով շեշտվում է նաև տվյալ աշխատության հրատապությունը:*

*Գրքի առաջին գլուխը նվիրված է 1917 թվականի փետրվարից մինչև 1918 թվականի մայիսն ընկած ժամանակաշրջանում Հայաստանում հողային հարցի և աշխատավոր գյուղացիության տնտեսական վիճակի քննարկմանը: Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիան չլուծեց ոչ բանվորական հարցը, ոչ ագրարային հարցը և ոչ էլ խաղաղություն տվեց պատերազմից հյուծված ու արյունաքամ եղած ժողովրդին: Ժամանակա-*

վոր կառավարությունը փաստորեն շարունակում էր ցարիզմի իմպերիալիստական գործելակերպը թե ներքին և թե արտաքին քաղաքականության մեջ։ Չանդրադառնալով մյուս խնդիրներին, հեղինակն իր խոսքը կենտրոնացնում է ագրարային հարցի վրա։ Նա հանգամանորեն քննարկում է բուրժուական ժամանակավոր կառավարության տեղական օրգանների՝ Անդրկովկասյան Հատուկ կոմիտեի, ապա նաև Կոմիսարիատի և Սեյմի հակաժողովրդական քաղաքականությունը, որի բուն նպատակը կապիտալիստական հարաբերությունների հետագա զարգացումն ու ամրապնդումն էր և ոչ թե ժողովրդին ազատություն և հող պարգևելը, ինչպես թմբկահարում էին մենշևիկներն ու էսէռները։

Փետրվարյան ռևոլյուցիայից հետո ոչ մի էական փոփոխություն տեղի չունեցավ Անդրկովկասի, այդ թվում և Հայաստանի գյուղացիության տնտեսական վիճակի մեջ։ Աշխատավոր գյուղացիությանը կերակրելով Սահմանադիր ժողովի շուտափույթ գումարման խոստումներով, Հատուկ կոմիտեն և նրա տեղական օրգանները ձգտում էին խափանել աշխատավոր գյուղացիության ռևոլյուցիոն զարթոնքը, պաշտպանության տակ վերցնելով կալվածատերերի ու կապիտալիստների սեփականությունը։ 1917 թվականի ապրիլի 12-ի իր հայտարարության մեջ Անդրկովկասյան Հատուկ կոմիտեն զգուշացնում էր, որ «ուրիշի սեփականության բռնագրավումը, արքունական թե կալվածատիրական անտառների կտրատումը և բոլոր տեսակի բռնությունները ու ինքնակամ գործողությունները բացարձակապես անթույլատրելի են... Հարկերն ու տուրքերը, քանի դեռ դրանք չեն փոխված նորերով, պետք է առաջվա նման մուծվեն»։ Բացարձակապես անթույլատրելի են բռնությունները ու ինքնակամ գործողությունները, հայտարարում էր Հատուկ կոմիտեն և չէր հապաղում հանգիստ խղճով բռնանալ ժողովրդի ռևոլյուցիոն կամքի վրա, ճնշել գյուղացիության՝ հողի նկատմամբ իր օրինական իրավունքն իրագործելու ամեն մի փորձ, պատժիչ ջոկատներ էր ուղարկում ծանր, ճորտատիրական հարկերից հրաժարվող, կալվածատերերի անասելի բռնությունների դեմ ըմբոստացող չքավոր գյուղացիներին ճզմելու համար։ Դեմ էր ինքնակամ գործողություններին, բայց ատամներով պաշտպանում էր մի բուռ հողատերերի կամայականությունները աշխատավոր հողագործների նկատմամբ, որոնց հետ վարվում էին ամենաանմարդկային ձևով, տրորում նրա պատիվն ու տարրական իրավունքները։ Այս բոլորը հեղինակը հաստատում է արխիվային բազմաթիվ պերճախոս փաստերով, Հայաստանի նահանգներից ու գավառներից գյուղացիների գրած բողոքի նամակներով, չքավոր գյուղացիների կողմից կալվածատիրական և վանքապատկան հողերի ռևոլյուցիոն բռնագրավման օրինակներով։

Ամբողջ Անդրկովկասում, այդ թվում նաև Հայաստանի գավառներում, ծավալված գյուղացիական ռևոլյուցիոն շարժումները ստիպում էին Հատուկ կոմիտեին՝ մի կողմից ուժեղացնելու ճնշումն ու ռեպրեսիաները, մյուս կողմից դիմելու ժողովրդին խաբելու նորանոր քայլերի։ Այս առումով աշխատության մեջ հաջող է վերլուծված և քննադատված «Հողային գործերի ժամանակավոր հանձնաժողովի» ստեղծման փաստը, ինչպես նաև «Անդրկովկասյան երկրամասում երկրային և տեղական հողային կոմիտեների մասին կանոնադրությունը»։ Փաստորեն ֆարս էր նաև Անդրկովկասի գյուղացիական համագումարը, որ տեղի ունեցավ 1917 թվականի հունիսին, Թիֆլիսում։ Համագումարի ընդունած հակագյուղացիական որոշումը, որը պահպանում էր հողի մասնավոր սեփականությունը, պայմանավորված էր համագումարի մենշևիկյան, էսէռական ու դաշնակցական կազմով։ Գործադրվող դաժան ռեպրեսիաները, ինչպես նաև «դեմոկրատիկ» աչքակապությունները, անզոր էին կասեցնելու աշխատավոր գյուղացիության դասակարգային պայքարը կալվածատերերի և կուլակների դեմ։ Աշխատության մեջ մանրամասնորեն նկարագրված են Բորչալուի գավառի հայկական գյուղերում, Սանահինում, Մարցում, Հաղպատում, Հալիձորում, Շիվանիձորում, Նաթևում, Արզաքանդում, Սևանի ավազանի մի շարք գյուղերում, Էջմիածնի գավառում և այլ վայրերում սկսված գյուղացիական հուզումները, աշխատավոր հողագործների պայքարը, նրանց ունեցած հաջողություններն ու իշխանության օրգանների պատժիչ գործողությունները։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից հետո Անդրկովկասի հակառևոլյուցիոն ուժերը ավելի սերտորեն համախմբվեցին երկրամասում նոր թափով ծավալվող բանվորա-գյուղացիական ռևոլյուցիոն շարժումները դիմագրավելու և Սովետական Ռուսաստանի թիկունքում ինտերվենտական բազա ստեղծելու նպատակով։ Նրանց ակտիվ աջակիցները այդ գործում օտարերկրյա իմպերիալիստներն էին։ Այդ համագործակցության արգասիքը եղավ Անդրկովկասյան Կոմիսարիատը, որի մեջ մտան մենշևիկները, դաշ-

նակցականների, մուսաֆաթականների և նացիոնալիստական այլ պարտիաների ներկայացուցիչները։ Շուտով Կոմիսարիատին փոխարինեց Անդրկովկասյան Սեյմը, որը վարում էր նույն հակաժողովրդական, հակառևոլյուցիոն քաղաքականությունը, ինչ որ նրա ախտահոյակ նախորդը։ Կոմիսարիատի և Սեյմի տիրապետության օրոք ավելի վատթարացավ բանվորների և աշխատավոր գյուղացիության վիճակը, իսկ նրանց պայքարը տիրապետողների դեմ ստացավ ավելի սուր բնույթ։ Հեղինակը ցույց է տալիս, որ Կոմիսարիատն ու Սեյմը օգտվում էին աշխատավորությանը կեղծ խոստումներով ու «դեմոկրատիկ» խաղերով խաբելու հին մեթոդներից։ Սրանք նույնպես ընդունում էին զանազան «կանոնադրություններ» և «հողային օրենքներ», որոնց նպատակը վերջին հաշվով կալվածատերերի ու կուլակների շահերի պաշտպանությունն էր և աշխատավոր գյուղացիության աչքին թոզ փչելը։ Այս շրջանում իրենց հակաժողովրդական գործունեությունը ակտիվացնում են նաև նացիոնալիստական պարտիաները։ Հեղինակը համոզիչ փաստերով մերկացնում է հայկական գյուղերում դաշնակցականների կատարած բռնությունները, մաուզերիստների արյունոտ գործելակերպը, մենշևիկների, էսէռների և մուսաֆաթականների նացիոնալիստական արարքները։ Այս կապակցությամբ գրքում միանգամայն տեղին խոսվում է «ազգային խորհուրդների» ազգային գնդերի, 1918 թվականի հունվարի 9—12-ը Շամխոր կայարանի մոտ կազմակերպված ռուս զինվորների արյունոտ սպանդի, Անդրկովկասը ռևոլյուցիոն Ռուսաստանից անջատ հայտարարելու հուդայական որոշման մասին։ Այնուհետև Վ. Միքայելյանը հանգամանալից կանգ է առնում 1918 թվականի գարնանից Անդրկովկասում նոր թափով ծավալվող գյուղացիական ռևոլյուցիոն շարժումների և դրանց ղեկավարման գործում բոլշևիկյան կազմակերպությունների և բոլշևիկյան մամուլի կատարած դերի վրա։

Հենց այս վերջին հարցի կապակցությամբ էլ ցանկանում ենք մի երկու դիտողություն անել աշխատության առաջին գլխի վերաբերյալ։ Հեղինակը նախանձելի մանրամասնությամբ, հետաքրքիր և առատ փաստերով է նկարագրում, վերլուծում աշխատավոր գյուղացիության անասելի ծանր վիճակը, պայքարը հողի համար, տրամաբանական հետևողականությամբ մերկացնում է տիրապետող դասակարգերի և նրանց իշխանության օրգանների հակագյուղացիական քաղաքականությունը։ Այս բոլորը ոչ միայն լավ է, այլև անհրաժեշտ և խիստ արժեքավոր։ Բայց պակաս անհրաժեշտ և արժեքավոր չէ նաև գյուղացիության ռևոլյուցիոն շարժումների կազմակերպման գործում բոլշևիկյան կազմակերպությունների և բոլշևիկյան մամուլի խաղացած հսկայական դերի հնարավորին չափ լրիվ բացահայտումը։ Չի կարելի ասել, թե հեղինակն անտեսել է այս հարցը, չի խոսել բոլշևիկյան կազմակերպությունների կատարած աշխատանքի մասին, բայց ցավոք սրտի, նա բավարարվել է մի քանի հանրահայտ փաստերի արձանագրությամբ, արխիվներում չի կատարել անհրաժեշտ պրպտումներ, որոնք, անկասկած, կտային դրական արդյունքներ։ Սա դժվարին, բայց տվյալ աշխատության համար անհրաժեշտ գործ էր, որի մասին հեղինակը, մեր կարծիքով, պետք է մտածի իր այս արժեքավոր ուսումնասիրության վրա հետագայում կատարելիք աշխատանքի ընթացքում։ Ի դեպ, այս առումով իրեն անհրաժեշտ որոշ նյութեր նա կարող էր քաղել նաև ժամանակի բոլշևիկյան մամուլից։ Դժբախտաբար, միակողմանի է օգտագործված նաև այդ մամուլը։ Վ. Միքայելյանն իր ուշադրությունն ավելի շատ կենտրոնացրել է բոլշևիկյան մամուլում եղած գյուղացիական ելույթների արձագանքի, քան թե այդ ելույթները կազմակերպելու ուղղությամբ մամուլի կատարած կազմակերպչական աշխատանքի բացահայտման վրա։ Մինչդեռ փաստ է, որ 1917—1918 թվականներին բոլշևիկների կազմակերպչական աշխատանքը բավական մեծ չափով կատարվում էր հենց մամուլի միջոցով։ Դրա արտահայտություններից մեկն էլ, օրինակ, Սովետական իշխանության դեկրետների, մասնավորապես հողային դեկրետի բազմակողմանի վերլուծությունն ու պրոպագանդան էր բոլշևիկյան հայ պարբերական մամուլում, մի հանգամանք, որի վրա նույնպես թռուցիկ ուշադրություն է դարձված աշխատության մեջ։ Բոլշևիկների պրոպագանդիստական և կազմակերպչական աշխատանքի կարևոր օղակներից մեկն էլ թռուցիկներն ու կոչերն էին, որոնք զգալի դեր են խաղացել ռևոլյուցիոն պայքարի տվյալ էտապում։ Այդ փաստաթղթերի միջոցով նույնպես կարելի էր և պետք էր վեր հանել բոլշևիկների գործունեությունը ագրարային շարժումների առնչությամբ։

Գրախոսվող աշխատության մեծ մասը՝ հաջորդ երկու գլուխները լուսաբանում են Հայաստանի գյուղացիության պատմությունը 1918—1920 թվականներին։ Մեր կարծիքով, ճիշտ է վարվել հեղինակը՝ այդ պատմությունը ամփոփելով երկու բաժինների մեջ։ Առա

ԺԻն բաժնում հանգամանորեն քննարկվում է գյուղացիության սոցիալ-տնտեսական դրությունը Հայաստանում՝ դաշնակների տիրապետության օրոք։ Օտարերկրյա սվինների օգնությամբ իշխանության գլուխ անցնելուց հետո, դաշնակցականները սկսեցին ավելի կազմակերպված կերպով և հետևողականորեն անցկացնել իրենց հակաժողովրդական, ազգայնական քաղաքականությունը։ Անտանելիորեն ծանրացավ բանվորների, չքավոր գյուղացիների, ազնիվ ու ժողովրդասեր մտավորականության վիճակը։ Հեղինակը քայլ առ քայլ հետևում և խոսուն փաստերով մերկացնում է դաշնակցականների հակագյուղացիական գործողությունները, որոնց նպատակն էր սրբությամբ պահպանել խոշոր մասնատիրական հողատիրությունը, չքավոր գյուղացիության պաուպերիզացիայի հաշվին ստեղծել գյուղական ցեցերի մի նոր վերնախավ՝ իբրև իրենց հուսալի հենարանը հայկական գավառներում, և, վերջապես, տգիտության ու խավարի, մաուզերի ու խաբեությունների միջոցով ճնշել ու ճզմել աշխատավոր գյուղացիության արդար բողոքի ամեն մի արտահայտություն։ «Հողային սեփականությունը սրբություն է, ոչ ոք իրավունք չունի կալվածատիրոջը դիպչելու»,՝ հայտարարում էին դաշնակցական պարագլուխները և հետևողականորեն իրագործում իրենց այդ «հեղափոխական սկզբունքը»։ Ավելին՝ ինչպես փաստերով ապացուցում է գրքի հեղինակը՝ նրանք հաճախ ուղղում էին նախկին իշխանությունների թույլ տված «սխալը»—վերականգնելով խոշոր հողատերերի նույնիսկ ցարիզմի օրոք կորցրած սեփականատիրական և հողօգտագործման իրավունքը։

Նկարագրելով գյուղական աշխատավորության հետագա աղքատացման ու սեփականազրկման պրոցեսը, կուլակների, վաշխառուների և սպեկուլյանտների աշխուժացումը այդ պայմաններում, Վ. Միքայելյանն այնուհետև անցնում է դաշնակցական «կառավարության» ագրարային քաղաքականության, այսպես կոչված, «պետական» արտահայտությունների քննարկմանը։ 1920 թվականին Հայաստանում անց է կացվում «հողաբաժանություն»։ Դա մի միջոցառում էր, որի նպատակն էր, ինչպես ճիշտ կերպով եզրակացնում էր հեղինակը՝ «գյուղում կալվածատիրության անխախտ պահպանումը և կուլակության դիրքերի ավելի հզորացումն ու ամրապնդումը» (էջ 78)։ «Հողաբաժանման» ժամանակ համայնքի լավագույն հողերը խլվեցին և տրվեցին կուլակներին, շատ հարուստներ և դաշնակցական «պառլամենտի» անդամներ, որոնք գյուղում չէին ապրում, մտցվեցին ցուցակների մեջ և հող ստացան, իսկ չքավոր ընտանիքների տարիքն առած անդամներին նույնիսկ հաշվառման չէին ենթարկում՝ պատճառաբանելով, թե՝ «ծեր են, վաղը կամ մյուս օրը կմեռնեն»։ Մասնատերերին խաբելու մյուս քայլը «Հողային հատուկ մարմինների մասին օրենքն» էր, որ դաշնակցական կառավարությունը ընդունեց 1920 թ. հունիսի 4-ին։ Կալվածատիրական, վանքապատկան և խոշոր մասնատիրական այլ հողերի «պետականացման» ստահոդ ֆրազով դաշնակցական կառավարիչները փորձում էին հողազուրկ գյուղացիությանը հեռու պահել ռևոլյուցիոն ելույթներից, ամրապնդել գյուղում կուլակային-կալվածատիրական վերնախավի դիրքերը։ Նույն նպատակն էր հետապնդում նաև բուրժուական ինքնավարությունների, այսպես կոչված, զեմստվոների կազմակերպումը։ Աշխատության մեջ հատուկ տեղ է հատկացված դաշնակցական հարկային քաղաքականության մերկացմանը։ Աշխատավոր գյուղացիությանը լրիվ կողոպտելու համար դաշնակցական կառավարությունը ստեղծել էր հարկային մի բարդ ու բազմազան սիստեմ, որի մեջ մտնող հարկերի տեսակները որոշ գավառներում հասնում էին 14-ի։ Եթե դրան ավելացնենք ճորտատիրության ժամանակներից մնացած պարհակները, խմբապետների կատարած ուղղակի կողոպուտները գյուղերում, պաշտոնյաների կաշառակերությունն ու զանազան խարդախությունները, «Ազգօգնությունից հացի պաշարները բռնագրավելու մասին» օրենքի ամենադաժան գործադրումը, անգլո-ամերիկյան ինտերվենտների թալանչիական արարքներն ու անբարոյական վարքագիծը և այլն և այլն, ապա պատկերը պարզ կդառնա։ Էլ չենք խոսում գների անտանելի թանկության և աղետաբեր համաճարակների մասին։ Գրքում բերված բազմաթիվ արխիվային փաստերը, ինչպես նաև մի շարք աղյուսակներ համոզիչ են դարձնում հեղինակի եզրակացությունը. «Դաշնակների տիրապետության շրջանում ստեղծված ծանր պայմանների հետևանքով քայքայվեց ու կործանվեց Հայաստանի բնակչության ապրուստի հիմնական միջոցը՝ գյուղատնտեսությունը։ Իր բոլոր հիմնական ճյուղերով՝ թե՛ դաշտավարությամբ, թե՛ այգեգործությամբ և թե՛ անասնապահությամբ, գյուղատնտեսությունը լիովին դեգրադացիա ապրեց» (էջ 98—99)։

Այս բոլորը, բնականաբար, ավելի արագացրին դասակարգային շերտավորումը Հայաստանի գյուղերում՝ մի բևեռում կենտրոնացնելով կուլակներին, կալվածատերերին և

նրանց ջերմեռանդ պաշտպան դաշնակ «կառավարիչներին», իսկ մյուս բևեռում՝ չքավոր գյուղացիությունը: Եվ գնալով ավելի սրվեց դասակարգային անհաշտ պայքարը մի բուռ շահագործողների և ճնշված ու հարստահարված մասսաների միջև: Հենց այդ պայքարի նկարագրությանն էլ նվիրված է քննարկվող աշխատության վերջին՝ երրորդ գլուխը: Պետք է նշել, որ հեղինակն այստեղ որոշ չափով հաղթահարել է առաջին գլխում եղած թերությունները և զգալի տեղ է հատկացրել բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությանը, թեև ոչ բոլոր դեպքերում է, որ այդ կազմակերպությունների աշխատանքը վերլուծվում է ագրարային ռևոլյուցիոն շարժումների կապակցությամբ: Լավ կլիներ, եթե հեղինակը շեշտը դներ բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքի այն կողմի վրա, որը նշանակալից էր հենց չքավոր գյուղացիության ռևոլյուցիոն պայքարը կազմակերպելու տեսակետից: Այնուամենայնիվ, նրան հաջողվել է բավական կոնկրետ պատկերացում տալ 1918—1920 թվականներին Հայաստանում ծավալված ագրարային-ռևոլյուցիոն շարժումների մասին, շարժումներ, որ ընդգրկել էին Հայաստանի գրեթե բոլոր գավառները: Վ. Միքայելյանը չի բավարարվում գյուղացիական ռևոլյուցիոն ելույթների լոկ նկարագրությամբ: Գնահատելի է, որ նա փորձում է իր ուսումնասիրած փաստերից հանել համապատասխան եզրակացություններ, որոնք, մեր կարծիքով, ճիշտ են և հարազատ պատմական իրականությանը: Այսպես, ընդգծելով, որ 1920 թվականի գարնանը Հայաստանում բարձրացող գյուղացիական ռևոլյուցիոն ելույթները գոյություն ունեցող դասակարգային անտագոնիզմի անմիջական արտահայտությունն էին, նա ավելացնում է. «Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ ինչպես 1918—1919 թթ., այնպես էլ, ճիշտ է ավելի քիչ չափով, 1920 թվականի սկզբնական շրջանի գյուղացիական ելույթների բնորոշ գիծը նրանց անջատ-անջատ, ցրված լինելն էր: Դեռևս թույլ էր կապը տարբեր շրջաններում տեղի ունեցող ելույթների միջև»: Այնուհետև հեղինակը բավական հանգամանորեն և համոզիչ փաստարկներով բացատրում է այդ երևույթի պատճառները: Ընդհանրապես քննարկվող աշխատությունը աչքի է ընկնում մի կողմից՝ օգտագործված փաստերի առատությամբ, մյուս կողմից՝ հեղինակի կատարած տեսական ընդհանրացումներով:

Աշխատության մեջ տարբեր առիթներով խոսվում է բանվոր դասակարգի և չքավոր գյուղացիության ռևոլյուցիոն դաշինքի կարևորության, այդ դաշինքի վճռական նշանակության մասին՝ տիրապետող դասակարգերի դեմ մղվող պայքարի հաղթանակի գործում: Բայց գիրքը շատ բանով կշահեր, եթե հեղինակը ավելի հանգամանորեն կանգ առներ այդ հարցի վրա՝ ցույց տալով միաժամանակ, թե աշխատանքի ինչպիսի ձևեր ու մեթոդներ էին գործադրում բոլշևիկյան կազմակերպությունները՝ բանվորա-գյուղացիական դաշինքը ամրապնդելու, այն ավելի նպատակալից դարձնելու համար:

Հայաստանի աշխատավոր գյուղացիության ռևոլյուցիոն պայքարը հողի համար, ի վերջո, պսակվեց հաղթանակով: Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ, Հայաստանի բանվորներն ու չքավոր գյուղացիները 40 տարի առաջ, 1920 թվականի նոյեմբերի 29-ին տապալեցին դաշնակների տխրահռչակ իշխանությունը, և հայոց լեռներում ու դաշտերում հաղթականորեն ծածանվեց Սովետական իշխանության դրոշը: Սովետական իշխանության առաջին տարիներին իրականացված ագրարային միջոցառումների, ինչպես նաև հետագայում Սովետական Միության եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում հայ աշխատավոր գյուղացիության ձեռք բերած վիթխարի նվաճումների համառոտ նկարագրությամբ էլ ավարտվում է գրախոսվող աշխատությունը:

Իր թերություններով հանդերձ, «Հայաստանի գյուղացիությունը Սովետական իշխանության համար մղված պայքարի ժամանակաշրջանում (1917—1920 թթ.)» գիրքը ուշադրության արժանի և արժեքավոր գործ է մեր պատմական գրականության մեջ:

Հ. Հ. ՏԵԼԵՓՅԱՆ